գօր. Փիրումեանի ու գօր. Յովսէփեանի, ինչպէս նաև նահանգապետ Ղորդանեանի յարաբերութիւնները, որ անդրադառնում էր շրջապատի վրա։ Զօրքերի մի մասը շտապ կերպով զինուած էր Անգլիայից նոր ստացուած Ռոս հրացաններով, որոնց վարժ չէր։ Թիկունքը լաւ կազմակերպուած չէր և հակապետական տարրերը՝ բոլշևիկները կարողանում էին դժուարութիւններ առաջացնել։ Այսպէս, հոկտ. 2-ին, Կարայալ կայարանից եօթ վերստ հեռու, Շահնալար գիւղի մօտ, խորտակուեց ճակատը զինուորներ տանող գնացքը 14 վագոններ ջարդուեցին, սպանուեց 12 և վիրաւորուեց 43 հոգի։ Բոլշևիկների գործն էր այս։

Փոքձելու համար մեր զօրքերի մարտունակութիւնը, այլ և ռազմական ոգին բարձրացնելու նպատակով, բարձր հրամանատարութիւնը որոշեց ձեռնարկել ընդհանուր յարձակման։ Ցաջողութեան դէպքում ենթադրւում էր առաջ շարժուել։ Յարձակումը յաջողութիւն չունեցաւ։ Թշնամու ուժեղ դիմադրութեան հետևանքով մեր զօրամասերը նահանջեցին դրեթէ մինչև Կաբս։ Այնուհետև նախաձեռնութիւնն ամբողջապէս անցաւ թիւրքերի ձեռքը։ Քայլ առ քայլ ճնշելով մերոնց, հոկտ. 28-ին, նրանք գրաւեցին Վեղենքոյի բարձունքները։ Ամբողջ հոկտ. 28-ին տաք կռիւներ տեղի ունեցան. Մազմանեանի զօրամասը ձգտում էր յետ խլել Վեղենքոյը։ Այս կռիւներում երկու կողմերն էլ ունեցան ծանր կորուստներ. վիրաւորուեց ճակատի պետ գլխապետ Գնդունին։ Հոկտ. 29-ին տեղի ունեցաւ զօրամասերի վերախմբում։ Համաձայն տրուած հրամանի, հոկտ. 30-ի առաւօտեան, մեր զօրքերը պիտի անցնէին հակայարձակման Վեղենքոյը գրաւելու նպատակով։ Սակայն առաջին գունդը մերժեց կատարել հրամանը և տեղից չշարժուեց։ Յուսահատ և անզօր՝ գնդ. Մազմանեանը ամենքի աչքի առջև մաուզերի երկու գնդակից սպանեց իրեն։ Այս ևս չազդեց զօրքի տրամադրութեան վրա։ Այդ միջոցին մեծ ուժով յարձակման դիմեցին թիւրքերը։ Սկսուեց խուճապային փախուստ։ Մեր զօրքերի մի մասը և գրահագնացքը նահանջեցին դէպի Մաղրա. ժողովուրդը և զօրքի միւս մասը խուժեց դէպի կիրճը՝ Գրոխլաղնոյէ գիւղի ուղղութեամբ։ Մեր սաւառնակը թռաւ Երևան։ Կարսն ընկաւ թշնամու ձեռքը։ Գերի մնացին զօր. Փիրումեանը, զօր. Արարատեանը, գնդ. Շաղուբաղեանը, գնդ. Վեքիլեանը, գնդ. Բաբաջանովը, փոխ-գնդ. Տէր-Առաքելեանը, 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ և մօտ 3,000 զինուորներ. նախարար Ա. Բաբալեանը, փոխ-նահանգապետ Զալխուչեանը, քաղաքագլուխ Նոհրատեանը և ազգաբնակութեան մեծ մասը։ Երեք օր անընդհատ թիւրքերը թալանեցին, բռնաբարեցին, սպանեցին և ամէն տեսակ վայրենութիւններ գործ դրին քաղաքում։

Նախարար Ա. Բաբալեանը, իբրև դէպքերի ականատես, զարհուրելի գոյներով է նկարագրում թիւրքերի գործած վայրագութիւնները։ Հայերը ենթարկւում էին կոտորածի, գեղեցիկ կանայք տարւում էին հարճութեան, տղամարդիկ քշւում էին Թիւրքիայի ներսերը։ Ի միջի այլոց, ցնցող տեղեկութիւններ է տալիս նա բոլշևիկների կատարած դերի մասին։ «Մեր դերութեան հինգերորդ օրը, գրում է նա, մեզ այցելեցին չորս հայեր՝ ուղեկցու-